

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՄԱՏՈՒՑՄԱՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԱԿԿ-ՄԱԾՁԲ-19/7**

ք. Երևան

«25» փետրվար 2019թ.

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Գագիկ Մանույանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Միջուկային և ռադիոակտիվ անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի Ժ/պ Արմեն Ամիրջանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է փորձաքննության ծառայությունների (փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով սահմանված աշխատանքների իրականացման, անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման և կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության) մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 67 279 572.0 (վաթսուներեք միլիոն երկու հարյուր յոթանասունինը հազար հինգ հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱՓՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհարժեհաբերելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ միջուկային անվտանգության
կարգավորման կոմիտե
Ք.Երևան

ՀՀ ՖՆ գործառն. վարչ

ՀՀ 900011040020

ՀՎՀՀ 02705793

Գլխավոր քարտուղար

Գ.Մանույան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության
գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ

Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4

Ինեկորբանկ

ՀՀ 2052022100061001

ՀՎՀՀ 02558849

Տուրքնի պ/կ

Ա.Ամիրջանյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ղ դրամ»

Ծառայության

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳԱԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /«Ղ դրամ»	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	50531140/1	<p>1. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների միջուկային և ճառագայթային անվտանգության փորձաքննություն</p> <p>1.1 Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անվտանգության գնահատում, տեխնիկական որոշումների, մոդիֆիկացիաների, անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի, միջուկային և ճառագայթային վրանգ ներկայացնող աշխատանքների կատարման ծրագրերի և միջուկային ու ճառագայթային անվտանգությանը վերաբերող այլ փաստաթղթերի գնահատում և փորձաքննություն:</p> <ul style="list-style-type: none"> Ներկայացված տեխնիկական որոշումների, մոդիֆիկացիաների, անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի և ծրագրերի, միջուկային ու ճառագայթային անվտանգությանը վերաբերվող այլ փաստաթղթերի ամբողջականության ստուգում: Անվտանգության պահանջների և չափորոշիչների համապատասխանության ստուգում (անհրաժեշտության դեպքում կատարելով ստուգողական հաշվարկներ): Ներկայացված հաշվարկների, նախագծային լուծումների ստուգման համար սեփական մաթեմատիկական մոդելի ձևափոխում և վերլուծությունների կատարում (անհրաժեշտության դեպքում): Փորձագիտական եզրակացության մշակում: <p>1.2 ՀԱԷԿ-ի N°2 էներգաբլոկի ռեակտորի ակտիվ գոտու 31-րդ վերաբեռնավորման նեյտրոնաֆիզիկական բնութագրերի փորձաքննություն: ՀԱԷԿ-ի N°2 էներգաբլոկի ռեակտորի ակտիվ գոտու վերաբեռնավորման ծրագրի փորձաքննություն: Ակտիվ գոտու ու միջուկային վառելիքի հետ աշխատանքների անվտանգության հիմնավորման գնահատում:</p> <ul style="list-style-type: none"> Ներկայացված ինֆորմացիայի ամբողջականության ստուգում: Ներկայացված հաշվարկների ստուգման համար Կենտրոնի կողմից PARCS-RELAP և PARCS-PATHS ծրագրերով մշակված ՀԱԷԿ-ի N°2 էներգաբլոկի ակտիվ գոտու մաթեմատիկական մոդելի ձևափոխում: 	դրամ	67279572	1	Ք.Երևան Տիգրան Մեծի 4	15.12.19

		<ul style="list-style-type: none"> • Ստուգողական հաշվարկների և փորձագիտական գնահատականների կատարում: • Ներկայացված անվտանգության հիմնավորումների և ծրագրերի վերաբերյալ փորձագիտական գնահատականների կատարում: • Եզրակացության մշակում: <p>2. ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով սահմանված աշխատանքներ</p> <p>2.1 ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի առաջին դասի տարրերի, մասնավորապես ռեակտորային տեղակայանքի տարրերի շահագործման ժամկետի երկարաձգումը հիմնավորող հաշվետվությունների դիտարկում:</p> <ul style="list-style-type: none"> • ՀԱԷԿ-ի կողմից ներկայացված անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի ամբողջականության ստուգում: • Առաջին դասի տարրերի ամրության հաշվարկների համար անհրաժեշտ եզրային պայմանների որոշման նպատակով կատարված ջերմահիդրավիկ և նեյտրոնաֆիզիկական վերլուծությունների մեթոդաբանության և արդյունքների դիտարկում: • Առաջին դասի տարրերի ամրության հաշվարկների, ներառյալ՝ ստատիկ, պարբերական, փխրունության, սեյսմիկ, մեթոդաբանության և արդյունքների դիտարկում: • Ընտրված սցենարների համար ստուգողական վերլուծությունների կատարում: • Եզրակացության մշակում: <p>2.2 ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի երկրորդ դասի տարրերի շահագործման ժամկետի երկարաձգումը հիմնավորող հաշվետվությունների դիտարկում:</p> <ul style="list-style-type: none"> • ՀԱԷԿ-ի կողմից ներկայացված անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի ամբողջականության ստուգում: • Երկրորդ դասի տարրերի ամրության հաշվարկների համար անհրաժեշտ եզրային պայմանների որոշման նպատակով կատարված ջերմահիդրավիկ և նեյտրոնաֆիզիկական վերլուծությունների մեթոդաբանության և արդյունքների դիտարկում: • Երկրորդ դասի տարրերի ամրության հաշվարկների, ներառյալ՝ ստատիկ, պարբերական, փխրունության, սեյսմիկ, մեթոդաբանության և արդյունքների դիտարկում: • Երկրորդ դասի համակարգերի էլեկտրասնուցման և հսկիչ-չափիչ համակարգերի տարրերի շահագործման ժամկետի երկարաձգումը հիմնավորող հաշվետվությունների դիտարկում: • Ընտրված սցենարների համար ստուգողական վերլուծությունների կատարում: • Եզրակացության մշակում: <p>3. ՀՀ ՄԱԿԿ-ի գործունեությունն ապահովող գիտահետազոտական աշխատանքներ</p> <p>3.1 ՀԱԷԿ-ում ջրածնի կառավարման համակարգի ներդրման արդյունավետության հետազոտություն:</p> <ul style="list-style-type: none"> • Ջրածնի կառավարման համակարգի հատկությունների հետազոտություն: 					
--	--	--	--	--	--	--	--

		<ul style="list-style-type: none"> • Հետազոտության արդյունքների և գործարանային բնութագրերի հիման վրա ջրածնի կառավարման համակարգի մոդելի մշակում COCOSYS ծրագրի համար: • ՀԱԷԿ-ի հերմետիկ գոտում ջրածնի տարածման, կուտակման և պայթուցավտանգ կոնցենտրացիայի առաջացման հիմնահարցերի հետազոտություն վթարային իրավիճակներում, ներառյալ ծանր վթարները՝ հաշվի առնելով սպրինկլերային համակարգի աշխատանքը: • Վերլուծության արդյունքների հիման վրա ՀՀ ՄԱԿԿ-ի համար առաջարկությունների մշակում: <p>3.2 ՀԱԷԿ-ի վթարային իրավիճակների հավանականությունների և նախագծային վթարների ընդլայնված վիճակների (DEC) գնահատում:</p> <ul style="list-style-type: none"> • ԱԷՄԳ և Արևմտյան Եվրոպայի միջուկային անվտանգության կարգավորող մարմինների ասոցիացիայի (WENRA) փաստաթղթերի ուսումնասիրություն ու ՀԱԷԿ-ի լրացուցիչ վթարային ռեժիմների սահմանման մոտեցման որոշում: • Ելակետային պատահարների ընտրություն և խմբավորում: • Ելակետային պատահարների հավանականությունների գնահատում: • Նախագծային վթարների սցենարների խմբավորում: • Ակտիվ գոտու վնասմանը չբերող արտանախագծային վթարների խմբավորում: • Ակտիվ գոտու վնասմանը բերող արտանախագծային վթարների խմբավորում: <p>3.3 ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի հերմետիկ բոքսի հատակի հոսակի (տրապի) ֆիլտրի խցանման դեպքում թողունակության որոշում ՀՀԴ (CFD) ծրագրային կոդի միջոցով:</p> <ul style="list-style-type: none"> • ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի հերմետիկ հերմետիկ բոքսի հատակի եռաչափ մոդելի մշակում: • Եռաչափ մոդելի մեշավորում: • Եզրային և սկզբնական պայմանների մոդելավորում: • Թվային լուծումների վերլուծություն: • Միաչափ կոդերով հաշվարկման դեպքում ընդունված ենթադրությունների ստուգում: • Հաշվետվության մշակում: <p>3.4 «Ալոմային էներգիայի օգտագործման մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի մշակման աշխատանքներ:</p> <ul style="list-style-type: none"> • Նոր օրենքի նախագծի վերջնական տարբերակի մշակում՝ համաձայն ՀՀ ՄԱԿԿ-ի հետ համաձայնեցված օրենքի բովանդակության և տրված դիտողությունների ու առաջարկությունների. - ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների, ԵՄ հետ CEPA համաձայնագրով նախատեսված միջուկային և ռադիոակտիվ անվտանգության ոլորտի հրահանգների ուսումնասիրություն և օրենքի բովանդակության լրամշակում (ըստ անհրաժեշտության): - Օրենքի նախագծի վերջնական տարբերակի մշակում և պարբերական (ամսական) քննարկում ՀՀ ՄԱԿԿ-ի հետ: <p>3.5 Պարբերական անվտանգության գնահատման հաշվետվության կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջների նախագծի մշակում:</p> <ul style="list-style-type: none"> • ԱԷՄԳ “Periodic Safety Review for Nuclear Power Plants” (SSG-25) անվտանգության ուղեցույցի ուսումնասիրություն: 					
--	--	---	--	--	--	--	--

		<ul style="list-style-type: none"> • Միջազգային փորձի ուսումնասիրություն: • Նախագծի մշակում և քննարկում ՀՀ ՄԱԿԿ-ի հետ: • Նախագծի վերջնական տարբերակի մշակում: <p>3.6 Հրդեհի ԱՀՎ-ի արդյունքների վրա օգտագործված ենթադրություններից բխող անորոշությունների գնահատում:</p> <ul style="list-style-type: none"> • Հրդեհի ԱՀՎ-ում օգտագործված ենթադրությունների ընտրություն: • Ընտրված ենթադրությունների համար սցենարների մշակում: • Սցենարների մոդելավորում: • Արդյունքների վերլուծություն: • Հաշվետվության մշակում: <p>3.7 Ճառագայթային անվտանգության և պաշտպանության պահանջների նախագծի մշակում:</p> <ul style="list-style-type: none"> • ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների և ԵՄ հետ CEPA համաձայնագրով նախատեսված միջուկային և ճառագայթային անվտանգության ոլորտի հրահանգների ուսումնասիրության արդյունքում փաստաթղթի կառուցվածքի և բովանդակության մշակում և համաձայնեցում ՀՀ ՄԱԿԿ-ի հետ: • Փաստաթղթի նախագծի մշակում հիմք ընդունելով ՀՀ ՄԱԿԿ-ի հետ համաձայնեցված կառուցվածքը և բովանդակությունը: • Փաստաթղթի նախագծի վերաբերյալ ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից ստացված առաջարկների և դիտողությունների քննարկում, համաձայնեցում և փաստաթղթի վերջնական տարբերակի մշակում: <p>3.8 ՀՀ կառավարության 04.06.2009թ. «Ռադիոակտիվ թափոնների կառավարման կարգը հաստատելու մասին» N° 631-Ն որոշման վերանայում:</p> <ul style="list-style-type: none"> • ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների և ԵՄ հետ CEPA համաձայնագրով նախատեսված միջուկային և ճառագայթային անվտանգության ոլորտի հրահանգների ուսումնասիրության արդյունքում փաստաթղթի կառուցվածքի և բովանդակության մշակում և համաձայնեցում ՀՀ ՄԱԿԿ-ի հետ: • Փաստաթղթի նախագծի մշակում հիմք ընդունելով ՀՀ ՄԱԿԿ-ի հետ համաձայնեցված կառուցվածքը և բովանդակությունը: • Փաստաթղթի նախագծի վերաբերյալ ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից ստացված առաջարկների և դիտողությունների քննարկում, համաձայնեցում և փաստաթղթի վերջնական տարբերակի մշակում: <p>3.9 ՀՀ ու ԵՄ միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով սահմանված 5 ԵՄ հրահանգների հետ ՀՀ միջուկային օրենսդրության հարմոնիզացիայի նպատակով առաջարկվող քայլերի և ժամանակացույցի մշակում:</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ օրենսդրության և ԵՄ 5 հրահանգների համեմատական վերլուծության արդյունքների ամփոփում: • ԵՄ 5 հրահանգներից բխող փոփոխություններ պահանջող կամ նոր մշակվելիք փաստաթղթերի ի հայտ բերում: 					
--	--	---	--	--	--	--	--

